Շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Նոնա Բուդոյան, շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչություն պետ
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆրանսիայի Հանրապետություն, 2024 թվականի մարտի 6-ից 9-ը:
3. **Հրավիրող կողմը.**
   Ֆրանսիայի Կառավարություն և ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր:
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն Շենքերի և կլիմայի հարցերով գլոբալ ֆորումին: Հանդիպումը միտված էր Փարիզյան համաձայնագրի իրականացման արագացմանը՝ նպատակ ունենալով մինչև 2030 թվականը նպաստել ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը բնակարանային ոլորտից՝ այդպիսով նպաստելով բնակարանային ֆոնդի նորացմանը, էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանը:

Ֆորումը նախատեսված էր բարձրաստիճան նախարարական լիագումար նիստերի, նախարարական կլոր սեղանի և պանելային քննարկումների ձևաչափով:

Ֆորումների ժամանակ տարբեր երկրների բարձրաստիճան պատվիրակությունները, տեղական ու միջազգային կառույցի ներկայացուցիչները համախմբվել էին՝ համաձայնեցնելու կլիմայական ճգնաժամը լուծելու ուղիները՝ դիմակայուն բնակարանաշինության և էներգաարդյունավետության բարձրացման առումով:

5. **Քննարկված թեմաները (հարցերը).**

Հանդիպման ընթացքում քննարկվել է՝

- մասնավոր հատվածի ֆինանսավորման հնարավորությունը շենքերի զուտ զրոյական անցման համար,
- կլիմայական դիմակայուն շենքերի խթանումը,
- թվային տեխնոլոգիաների նորարարական լուծումները՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման նպատակով,
- նախատեսվող ազգային մակարդակով սահմանված գործողությունների համար ճանապարհային քարտեզների մշակումը,
- հարմարվողականության և դիմակայունության խնդիրները շինարարական ոլորտում,

- շենքերի դեկարբոնիզացիա (ապաածխածնացում) և հարմարվողականության միջոցառումների իրականացում քաղաքաշինության ոլորտում ճիշտ կառավարման միջոցով,
- էներգարդյունավետ շենքերի դերը էներգետիկայի ոլորտում:

**6. Հանդիպումները, ելույթները.**

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալի հետ մասնակցել եմ նախարարական բարձրաստիճան կլոր սեղանին, որի ընթացքում կարևորվել է շրջակա միջավայրի ոլորտում Ֆրանսիայի Հանրապետության հետ փոխշահավետ համագործակցության ամրապնդումը: Մասնավորապես նշվել է, որ առաջնահերթություն է առավել դիմակայուն շենք-շինությունների արագ անցումը, ինչը կսահմանափակի վերջիններիս վրա շրջակա միջավայրի ազդեցությունը, ինչպես նաև կարևորել է շենքերի էներգաարդյունավետության բարձրացումը, որպես կարևոր կլիմայական գործողություն՝ նպատակ ունենալով նպաստել շենքերի ֆոնդից ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը: Հայաստանը COP 28-ում միացել է նաև Գլոբալ վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության բարձրացման հանձնառությանը, ինչը նույնպես Ֆրանսիայի Հանրապետության նախաձեռնությունն էր, նպատակ ունենալով այս ոլորտում նպաստել գլոբալ կարողությունների եռապատկմանը և էներգաարդյունավետության կրկնապատկմանը: Դա լիովին համահունչ է Հայաստանի Հանրապետության առաջնահերթություններին: Ներկայացվել է նաև, որ այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում. 2017 թվականից մեկնարկել է «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» դրամաշնորհային ծրագիրը, իսկ 2022 թվականի մեկնարկել է բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիրը:

Քննարկման ժամանակ անդրադարձ է եղել Հայաստանի Կառավարության կողմից հաստատված «Ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ (մինչև 2050 թվական) ռազմավարությանը, ինչը նպատակ ունի ապահովել երկարաժամկետ օրակարգ կլիմայական հանձնառությունների համար, համադրել զարգացման նպատակները կլիմայական գործողությունների հետ և համակարգված դիտարկել մեղման հնարավորությունները ողջ տնտեսության կտրվածքով:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում ստորագրվել է «Շեյլոթի» նախարարական հռչակագիրը:Հռչակագրին 2024 թվականի մարտի 8-ի դրությամբ միացել է 70 երկիր, այդ թվում Հայաստանը (https://www.ecologie.gouv.fr/sites/default/files/declaration-de-chaillot-forum-batiments-climat.pdf):

Նախարարական հռչակագիրը նպատակ ունի խթանել շենքերի դեկարբոնիզացիան և բարձրացնել կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունությունը՝ ամրապնդելով երկրների միջազգային համագործակցությունը և պարտավորությունների իրականացումը

շինարարության ոլորտում, մասնավորապես կոչնի երկրների քաղաքականություն մշակողներին մշակել և իրականացնել կլիմայական գործողություններ, քաղաքականություններ՝

- նվազեցնելու ջերմոցային գազերի արտանետումները ներկայիս և նոր կառուցվող շենքերից բազմակողմ և բազմաշահառու համագործակցության միջոցով, խթանել համագործակցությունն ու գործընկերությունը միջազգային կազմակերպությունների և կառավարությունների միջև,
- կանխարգելելու կլիմայի և շրջակա միջավայրի բացասական ազդեցությունը շենքերի և շինարարության ոլորտի վրա,
- կիրառելու կլիմայական նորարարական տեխնոլոգիաներ և լուծումներ շինարարության ոլորտում,
- հատուկ ուշադրություն դարձնելու պետական շենքերի գնումների գործընթացներին՝ առաջնորդվելով գնումների հավակնոտ քաղաքականությամբ,
- խթանելու շենքերի և շինարարության ոլորտում ստանդարտների, պիտակների և հավաստագրերի մշակումը և ընդունումը,
- ներդնելու համապատասխան ֆինանսական շրջանակ, ներառյալ ֆինանսական և հարկաբյուջետային խթաններ և կարգավորող գործիքներ, ինչպիսիք են տաքսոնոմիաները՝ ավելացնելու զրոյական արտանետումներով, կլիմայական դիմակայուն շենքերը և աստիճանաբար կրճատելու արտանետող, կլիմայական ոչ դիմակայուն շենքերի ֆինանսավորումը,
- նպաստելու ազգային մակարդակով կարողությունների զարգացմանը և ամրապնդմանը:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալի հետ երկկողմ հանդիպում եմ ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի օգնական, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի Նյու Յորքի գրասենյակի ղեկավար տկն. Լիգիա Նորոնիայի հետ:

Քննարկվել է Հայաստանում ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի գրասենյակ բացելու հնարավորությունը և Հայաստանում վաղ ազդարարման համակարգի բարելավման և զարգացման համար ՄԱԿ-ի ՇՄԾ հնարավոր աջակցության և համագործակցության հեռանկարները:

Տկն. Նորոնիան ողջունել է Հայաստանի ակտիվությունը շրջակա միջավայրի ոլորտում կատարած աշխատանքների և նախաձեռնությունների համար, հատկապես կլիմայի փոփոխության և պլաստիկի դեմ մղվող պայքարներում:

Նշել է, որ ներկայումս ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը ունի ֆինանսական խնդիրներ, աշխատանքներ են տարվում Ավստրիայի և Ղազախստանի գրասենյակների ընդլայնման ուղղությամբ և այդ պատճառով իրատեսական չէ նոր գրասենյակի բացումը տարածաշրջանում:

Վաղ ազդարարման համակարգի հզորացման ու վերազինման հետ կապված առաջարկել է դիմել ՄԱԿ-ի ՇՄԾ նոր՝ վաղ ազդարարում շրջակա միջավայրի համար նախաձեռնությանը: Տեղեկացրել է, որ այդ նախաձեռնությունը լինելու է ավելի մասշտաբային և երկարաժամկետ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել հուշագրի ստորագրումից հետո անցնել ավելի գործնական՝ առաջնահերթությունների իրականացմանը, ինչը նույնպես քննարկվել է հանդիպման ժամանակ:

Կլիմայական քաղաքականության վարչության պետ Ն.Բուդոյան

12.03.2024թ.